եպիսկոպոսի անունով, որպեսզի պատուիրուեց առաջնին ընդունել, իսկ վերջինին յանձնել մատենադրանի իրեղէններըւ կաղ-կարաստիքը և ձեռագիր ու տպագիր գրքերը՝ Սինոդի անդամներ Տ. Տ. Յաւսիկ և Մատթէոս վարդապետների ներկայութեամբ և կազմել արձանագրութիւն։ 10 փետրուարի. թ. թ. 283 և 284։

Կանգակ Ուսումնարանական Յանձնաժողովի անունով, որով Տ. Բագրատ վարդապետը կարգուեցաւ Յանձնաժողովի նախագահ, իսկ ճեմարանի ուսուցիչ Պօղոս Սատիկեանն անդամ։ 12 փետրուարի. թ. 286։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՀՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանգակ օրհնութեան և գոհունակութեան ա. Աղէքսանդր Թաչատրեան Ղարաջեանի անունով, որ Պետրովակ քաղաքի Հայոց եկեղեցական–ժխական գպրոցին շինութիւն է նուիրել։ 10 յունուարի. թ. 89։

Կանգակ օրհնութեան և գոհունակութեան Թաւրիզի ազգային Արամեան գպրոցի Յօբելենական Յանձնաժողովի անունով՝ գպրոցի 60-ամեայ յոբելեանը կատարելու առթիւ։ 15 յունուարի. թ. 108։

Կանգակներ Տիխխոի վաճառականներ Սարգիս Սոնփանեան և Դէորգ Գրիգորեան Աւագեանների անունով, որոնք Թէլէթի ս. Դէորգ ուխտատեղում երկու սենեակ են կառուցել՝ ուխտաւորների համար, ծախսելով ամէն մէկը 1000-ական ռուբլի։ 23 յունուարի. թ. թ. 155 և 156։

Կանգակով գոհունակութիւն յայտնուեց, Երևանի փոխթեմակալի միջնորդութեան համաձայն, դատաստանական քննիչ ա. Տիգրան Յակոբեան Ալթունեանցին, որ Բասարգեչարի եկեղեցու շինութիւնը յաջողութեամբ գլուխ է հանել իւր բարոյական աջակցութեամբ։ 29 յունուարի. թ. 208։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Երեւանի փոխթեմակալին յայտնել Նորին Վեհափառութեան գոհունակութիւնն ու Հայրապետական օրհնութիւնը Բասարգեչարի շրջանի ոստիկան պ. Աւետիս Տէր-Գրիգորեանին և եկեղեցու շինութեան հոգաբարձու պ. Ղարիբ Բոյաղչեանին, որ առաջինն աջակցութիւն է ցոյց տուել եկեղեցու շինութեան գործում, իսկ երկրորդը նուիրել է Նորակառոյց եկեղեցու գմբէթի համար խաչ, մի ջահ, սեղանի վարագոյր և արծաթեայ սկիհ։ 29 յունուարի. թ. թ. 209 և 210.

Կոնդակ օրհնութեան Պեատիգորսկի հայոց եկեղեցական-ծխական դպրոցի Յոբելինական Յանձնաժողովի անունով դպրոցի 25 ամեայ յոբելեանը կատարելու առթիւ։ 5 փետրուարի. թ. 257.

Կոնդակ գոհունակութեան և օրհնութեան Թէոդորոս Խաչիեանցի անունով Շուշու Մեղրեցոց ս. Աստուածածին եկեղեցու դպրոցը վերանորոգելու առթիւ, որի համար ծախսել է 3000 րուբլի։ 8 փետրուարի. թ. 268.

ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Թ. 735. 12–13 դեկտեմբերի 1912 թ. Սինոդն ի նկատի ունենալով, որ Ներսէս քահանայ Հերթեցեանը իւր 12 ամեայ քահանայագործութեան ընթացքում միշտ խռովութիւնների և գժտութիւնների պատճառ է եղել և չէ ճանաչել հոգևոր իշխանութիւն, չի կատարել նրա ամենաօրինական պահանջները, այլ ընդհակառակը ըմբոստանալով իւր իշխանութեան դէմ անտեղի և անարդար բողոքներ է յարուցանում, իւր գրութիւններում թեմական իշխանութեան համար վիրաւորական ոճ է բանեցնում, քանիցս զգուշացումներ է եղած և պատժուած է, բայց չի ուղղւում իւր խռովարար ընթացքից, որոշում է ազատ համարել նորան քահանայական կարգից և իսպառ հոգևոր կոչումից.